ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԵՐԱՔՆՆԻՉ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Երևանի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի վճիռ
Նախագահող դատավոր՝ Է.Ամալյան

քաղաքացիական գործ թիվ ԵԱՆԴ/0895/02/13

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վերաքննիչ քաղաքացիական դատարանը
(այսուհետ՝ Վերաքննիչ դատարան),

նախագահությամբ՝ Դ. ԽԱՉԱՏՐՅԱՆԻ
մասնակցությամբ՝ դատավորներ Ն. ՏԱՊԱՐԱՑՅԱՆԻ
Մ. ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻ

2013 թվականի դեկտեմբերի 03-ին,

դռնբաց դատական նիստում քննելով Ժուլետա Ամարիկյանի և Ժուլետա Ամարիկյանի ներկայացուցիչ Տիգրան Հայրապետյանի վերաքննիչ բողոքները Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ նաև՝ Դատարան) 04.06.2013 թվականի վճռի դեմ՝ թիվ ԵԱՆԴ/0895/02/13 քաղաքացիական գործով ըստ դիմումի՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հոգեբուժական բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության Ավանի հոգեբուժական կլինիկայի ղեկավար Ա. Հակոբյանի՝ քաղաքացի Ժուլետա Դավաթիի Ամարիկյանին հոգեբուժական հիվանդանոցային հարկադիր բուժման ենթարկելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1.Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով Դատարան՝ դիմումատուն պահանջել է թույլ տալ Ժուլետա Ամարիկյանին ենթարկել հարկադիր բուժման:

Դատարանի 04.06.2013 թվականի վճռով դիմումը բավարարվել է:

Նշված վճռի դեմ վերաքննիչ բողոքներ են ներկայացրել Ժուլետա Ամարիկյանը և Ժուլետա Ամարիկյանի ներկայացուցիչ Տիգրան Հայրապետյանը:

Վերաքննիչ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2.Ժուլետա Ամարիկյանի վերաքննիչ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.

Վերաքննիչ դատարանը ստորև շարադրում է վերաքննիչ բողոքի հիմքերն ու հիմնավորումները՝ դատարանի նախընտրած հերթականությամբ և խմբավորմամբ:

Բողոք բերած անձը նշել է, որ իրեն բռնի ուժով տեղափոխել են հոգեբուժական հիվանդանոց: Ոստիկանության աշխատակիցները բռնություն են գործադրել իր վրա: Ինքը որևէ հակաօրինական վարք չի ցուցաբերել և զառանցանքային մտքեր չի հայտնել:

Իր ու եղբոր միջև առկա է բնակարանային վեճ և եղբայրը չի ցանկանում ժառանգական գույքը վաճառել և իր բաժինը տալ իրեն: Այդ պատճառով եղբայրն իրեն տեղափոխել է հիվանդանոց: Իրեն անօրինական զրկել են ազատությունից՝ խախտելով ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված իրավունքները:

Նշել է, որ հիվանդանոցում շատ անմարդկային են վարվել վերջինիս նկատմամբ, ոտնահարել և ստորացրել են իրեն:

Նշել է, որ Դատարանի վճիռն անօրինական է:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Դատարանի 04.06.2013 թվականի վճիռը՝ դիմումը մերժել, իրեն տալ բարոյական վնասի հատուցումը:

2.Ժուլետա Ամարիկյանի ներկայացուցիչ Տիգրան Հայրապետյանի վերաքննիչ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.

Վերաքննիչ դատարանը ստորև շարադրում է վերաքննիչ բողոքի հիմքերն ու հիմնավորումները՝ դատարանի նախընտրած հերթականությամբ և խմբավորմամբ:

Դատարանը, կիրառել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 174-րդ հոդվածը, որը չպետք է կիրառեր, չի կիրառել ՀՀ Սահմանադրության 3-րդ, 14-րդ, 16-րդ հոդվածները, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածը, «Հոգեբուժական օգնության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 8-րդ, 13-րդ կետերը, 22-րդ հոդվածը, որոնք պետք է կիրառեր:

Բողոքի սույն հիմքերը բողոք բերած անձը հիմնավորել է հետևյալ փաստարկներով.

Դատարանը, պետք է քննության առարկա դարձներ արդյո՞ք Ամարիկյանը վտանգ է ներկայացնում իր կամ այլ անձանց համար, կամ բուժում չիրականացնելը, կամ բուժումը դադարեցնելը կարող է վատթարացնել նրա առողջական վիճակը:

Դատարանը, պետք է որոշեր, թե այս երկու հանգամանքներից ո՞րն է առկա, և հիվանդին հարկադրաբար բուժման ենթարկելը բխում է արդյոք մարդասիրության և մարդու իրավունքների պաշտպանության սկզբունքներից: Բժշկական անձնաժողովի կողմից Դատարան ներկայացված եզրակացությունից հետևում է, որ Ամարիկյանը վտանգ չի ներկայացնում իր կամ այլ անձանց համար և նա պետք է բուժումը ստանար ամբուլատոր եղանակով՝ տարածքային հոգեբույժի հսկողությամբ:

Ինչ վերաբերում է հարկադրաբար բուժման ենթարկելու երկրորդ հանգամանքին՝ բուժում չիրականացնելը կարող է վատթարացնել հիվանդի

առողջական վիճակը, ապա այս մասին որևէ խոսք չկա ոչ հոգեբուժների եզրակացության մեջ, ոչ էլ Դատարան ներկայացված դիմումում:

Հիվանդն իրավունք ունի պահանջելու իր ընտրած հոգեբույժ մասնագետի մասնակցությունն օրենքով նախատեսված հոգեբուժական հանձնաժողովի աշխատանքներին: Այս իրավունքն Ամարիկյանը չի կարողացել իրականացնել և նրան հնարավորություն չեն ընձեռել:

Ինչ վերաբերվում է եզրակացությանը, ապա այն կրում է ձևական բնույթ, քանի որ այն ընդհանրապես պատճառաբանված չէ: Այսպիսով բժիշկ հոգեբույժների եզրակացությունը հիմնավորված չէ, և այնտեղ չի մասնակցել հիվանդի կողմից հրավիրված այլ հաստատության մասնագետը:

Հիվանդն իրավունք ունի ստանալու իրավաբանական օգնություն: Սակայն Ամարիկյանին մերժել են այս օգնությունը ստանալու հարցում:

Ամարիկյանը դատաքննության ժամանակ չի ունեցել իրավաբան ներկայացուցիչ, իսկ իր ներկայացուցիչը շահերի հակառակ դիրքորոշումներ է արտահայտել, և Դատարանի վճիռը հիմնվել է հենց ներկայացուցչի կողմից տրված ցուցմունքների և բացատրությունների վրա:

Ամարիկյանի ներկայացուցիչը չի ունեցել Դատարանում Ամարիկյանին ներկայացնելու լիազորություն, սակայն Դատարանը նրան ճանաչել է որպես ներկայացուցիչ և հարցաքննել դատական նիստում, իսկ հետագայում էլ վճիռը հիմնավորել վերջինիս ցուցմունքներով:

Եթե Ամարիկյանն ունենար ներկայացուցիչ, ապա վերջինս ինքնաբացարկի միջնորդություն կարող էր ներկայացնել նախագահող դատավորին, այն առումով, որ դատավորն ակնհայտ կողմնակալություն է դրսևորել, որ օրենսդրության խախտումներով ընդունված դիմումը վարույթ է ընդունել, հիվանդին հարկադրաբար բուժման համար վերջինիս հոգեբուժական հիվանդանոցում մնալու ժամկետը երկարացրել է անորոշ ժամանակով, որը կարող էր տևել մի քանի տարի՝ մինչև դատական ակտը ստանա օրինական ուժ:

Եթե պարզվեր, որ հիվանդը պետք է հարկադիր բուժում ստանա ասենք 10 օր, ապա վերջինս ստիպված էր գտնվել հոգեբուժական հաստատությունում մինչև դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը, այսինքն առնվազն մի քանի ամիս՝ եթե հիվանդը կամ հոգեբուժարանի ներկայացուցիչը բողոքարկեր վճիռը: Ավելին, եթե նախագահողը դատաքննությանը համոզվեր, որ հիվանդը կարիք չունի հարկադիր բուժման, ապա միևնույն է հիվանդը պետք է մնար հոգեբուժական հաստատությունում մինչև դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը: Բնականաբար այս հանգամանքը հաստատում է, որ նախագահող դատավորը նախապես արդեն հայտնել է իր կանխակալ վերաբերմունքը, որ վերջինս գտնում է, որ հիվանդն առնվազն մեկ ամիս պետք է մնա հոգեբուժարանում: Բնականաբար նման դեպքում խախտվում է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը, այն առումով, որ դատավորը կողմնակալ է եղել, կամ գոնե այդպիսին երևացել է դիմումի համար:

Վկայակոչել է 1983 թվականի փետրվարի 22-ի Եվրոպայի խորհրդի նախարարների խորհրդի թիվ R (83) հանձնարարականը, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային որոշումներ:

Տվյալ դեպքում բժշկական հաստատության կողմից պետք է սպասվի եզրակացություն այն մասին, որ հիվանդը կարող է տեղավորվել հաստատությունում միայն երբ հոգեբուժական խանգարման պատճառով նա լուրջ վտանգ է ներկայացնում իր և այլ անձանց համար, մինչդեռ նման դիրքորոշում չի հայտնվել, սակայն Դատարանը միևնույն է որոշում է կայացրել հարկադիր բուժման:

Տվյալ դեպքում, երբ Ամարիկյանը հայտնել է իր դիրքորոշումը, որ ինքը հոգեկան հիվանդ չէ, որ ունի ալերգիա դեղերի նկատմամբ, որ ինքը վեճ ունի եղբոր հետ և դրա համար են նրան տեղավորում հիվանդանոց, Դատարանը բավարար չափով ուշադրության չի արժանացրել և առանց որևէ պատճառաբանության անտեսել է դրանք: Դատարանը, չի նշանակել փորձաքննություն պարզելու համար արդյոք արժանահավատ է բժիշկների կողմից տրված եզրակացությունը, քանի որ այն որևէ ձևով պատճառաբանված չէ:

Այսպիսով մի դեպքում Դատարանն անվերապահորեն վստահել է մի եզրակացության, որը չունի պատճառաբանական մաս, իսկ մյուս դեպքում անտեսել է հիվանդի պատճառաբանված փաստարկները գործի իրական հանգամանքների շուրջ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Դատարանի 04.06.2013 թվականի վճիռը և գործն ուղարկել նույն դատարան նոր քննության, կամ բեկանել և փոփոխել Դատարանի 04.06.2013 թվականի վճիռը՝ ՀՀ ԱՆ «Հոգեբուժական բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության Ավանի հոգեբուժական կլինիկայի ղեկավար Ա. Հակոբյանի դիմումը մերժել:

<u>3.Վերաքննիչ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.</u>

1. 01.06.2013 թվականի թիվ 0125-2099 «Հոգեբուժական բժշկական կենտրոն» ՓԲԸ Ավանի հոգեբուժական կլինիկայի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Ժուլետա Դավաթիի Ամարիկյանը (բնակ. ք. Երևան, Սվաճյան 12-85 հասցեում) ՀԲԿ Ավանի հոգեբուժական կլինիկա է ընդունվել շտապօգնության միջոցով 30.05.2013 թվականին «Սուր զառանցական համախտանիշ» նախնական ախտորոշմամբ: Հիվանդը չի ստորագրել համաձայնության դիմումը բուժման համար: Ժ. Ամարիկյանը ՀԲԿ Ավանի հոգեբուժական կլինիկայում հաշվառված է 25.02.2013 թվականից «Զառանցական խանգարում» ախտորոշմամբ: 01.06.2013 թվականին զննվել է բժշկական հանձնաժողովի կողմից: Հիվանդը խիստ լարված է, արտահայտում է թունավորման, հետապնդման զառանցական մտքեր, թշնամաբար է տրամադրված եղբոր ընտանիքի նկատմամբ, սպառնում է վերջիններիս: Ըստ հանձնաժողովի եզրակացության իր ներկա հոգեկան վիճակով Ժ.Ամարիկյանը վտանգ է ներկայացնում իր և շրջապատի նկատմամբ և կարիք ունի ստացիոնար բուժման (գ.թ. 3):

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հոգեբուժական բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության Ավանի հոգեբուժական կլինիկայի ղեկավար Ա. Հակոբյանի 2013 թվականի հունիսի 01-ի թիվ 0125-2099 տեղեկանքի համաձայն՝ հիվանդ Ժուլետա Դավաթիի Ամարիկյանը, ծնված

1960 թվականին, իր ներկա հոգեկան վիճակով չի կարող ներկայանալ դատարան և մասնակցել նիստին (գ.թ. 5):

3. ՀՀ Առողջապահության նախարարությանը կից միջգերատեսչական ամբուլատոր դատահոգեբուժական փորձագիտական հանձնաժողովի 04.10.2012 թվականի ամբուլատոր դատահոգեբուժական փորձագիտական հանձնաժողովի թիվ 340/12 եզրակացության համաձայն՝ «...հանձնաժողովը եզրակացնում է, որ Ժուլետա Դավաթիի Ամարիկյանը տառապում է «Զառանցական խանգարում» խրոնիկական հոգեկան հիվանդությամբ, ինչի մասին վկայում են ինչպես անամնեստիկ տվյալները, այնպես էլ ներկա հետազոտման արդյունքները, որոնք թույլ տվեցին փորձաքննվողի մոտ հայտնաբերել անհեթեթ բնույթի վերաբերման, հետապնդման, հատուկ նշանակության զառանցական մտքերը, մտածողության պարալոգիզմ, անհետևողականություն, կտրտվածություն, անկապություն, հուզական ռեակցիաների բթացածություն, հարթվածություն, աղքատություն, ինտելեկտուալ-մնեստիկ խանգարումներ, քննադատական ունակությունների բացակայություն, ինչը փորձաքննվողի մոտ արտահայտված է այն աստիճանի, որ ինչպես իրավախախտումը կատարելու պահին, այնպես էլ ներկայումս զրկել է նրան իր գործողությունների վտանգավորությունը գիտակցելու և դրանք ղեկավարելու հնարավորությունից, ուստի Ժուլետա Դավաթիի Ամարիկյանին հարկ է կատարածի նկատմամբ ճանաչել անմեղսունակ: Կարիք ունի հարկադիր բուժման և հսկողության տարածքային հոգեբույժի մոտ: Իր ներկա հոգեկան վիճակով նա չի կարող մասնակցել դատաքննչական գործողություններին» (գ.թ. 14-18):

4. 04.06.2013 թվականի դատական նիստի արձանագրության համաձայն՝ «Հոգեբուժական բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության Ավանի հոգեբուժական կլինիկայում քննել է Ժուլետա Ամարիկյանին հոգեբուժական հիվանդանոցային հարկադիր բուժման ենթարկելու մասին «Հոգեբուժական բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության միջնորդությունը (գ.թ. 13):

5. 04.06.2013 թվականի դատական նիստի արձանագրության համաձայն՝ որպես Ժուլետա Ամարիկյանի ներկայացուցիչ հանդես է եկել Մուրազ Ամարիկյանը (գ.թ. 13):

4. Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Քննելով վերաքննիչ բողոքները նշված հիմքերի և հիմնավորումների սահմաններում՝ Վերաքննիչ դատարանը նախ անհրաժեշտ է համարում հիշատակել, որ սույն գործով ներկայացվել են թվով երկու վերաքննիչ բողոքներ, սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերաքննիչ բողոքներնն ըստ էության նույնաբովանդակ են, ուստի Վերաքննիչ դատարանը ներքոշարադրյալ պատճառաբանություններով դրանց կանդրադառնա միասին:

Անդրադառնալով բողոք բերած անձի և իր ներկայացուցչի վերաքննիչ բողոքներին՝ Վերաքննիչ դատարանը հարկ է համարում նշել, որ ներկայացված վերաքննիչ բողոքների քննության շրջանակներում մինչ դրանց մյուս հիմքերին և հիմնավորումներին անդրադառնալը նախնառաջ անհրաժեշտ է պատասխանել հետևյալ իրավական հարցադրմանը. արդյո՞ք Ժուլետա Ամարիկյանի անունից Դատարանում հանդես եկած անձ՝ Մուրազ Ամարիկյանը ՀՀ քաղաքացիական

դատավարության օրենսգրքի իմաստով իրավասու էր հանդես գալ, որպես Ժուլետա Ամարիկյանի ներկայացուցիչ:

Վերաքննիչ դատարանն այդ առումով հարկ է համարում մեջբերել Ժուլետա Ամարիկյանի ներկայացուցիչ Տիգրան Հայրապետյանի այն փաստարկը, որ Ամարիկյանի ներկայացուցիչը չի ունեցել Դատարանում Ամարիկյանին ներկայացնելու լիազորություն, սակայն Դատարանը նրան ճանաչել է որպես ներկայացուցիչ և հարցաքննել դատական նիստում, իսկ հետագայում էլ վճիռը հիմնավորել վերջինիս ցուցմունքներով:

Այսպես՝ ՀՀ Սահմանադրությունը մարդուն, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները ու ազատությունները հռչակում է որպես բարձրագույն արժեքներ և պետությանը սահմանափակում մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով ու ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք (հոդված 3): Միաժամանակ ՀՀ Սահմանադրությունն ամրագրում է մարդու անօտարելի և բնական իրավունքների ապահովման մի շարք երաշխիքներ, որոնց շարքում առավել կարևորվում է անձի իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության իրավունքը, պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքը (հոդված 18), ինչպես նաև իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը (հոդված 20): Այդ երաշխիքները ՀՀ Սահմանադրության 14.1-րդ հոդվածի ուժով հավասարապես վերաբերում են նաև հոգեկան խանգարումներ ունեցող անձանց:

ՀՀ Վճռաբեկ դատարանն օրենքի միատեսակ մեկնաբանման անհրաժեշտության առկայությունից ելնելով, անդրադարձել է վերոնշյալ հարաբերությունները կանոնակարգող իրավական դրույթների մեկնաբանմանը, մասնավորապես՝ Վճռաբեկ դատարանը նշել է, որ հոգեկան խանգարումներ ունեցող անձանց՝ որպես խոցելի խմբի անդամների պաշտպանությանն են ուղղված նաև մի շարք միջազգային իրավական փաստաթղթեր, որոնցում ևս այս անձանց իրավունքների դատական արդյունավետ պաշտպանությունն ամրագրվում է որպես իրավունքների ու ազատությունների ապահովման կարևորագույն երաշխիք (Տե՛ս՝ Վճռաբեկ դատարանի թիվ ԵՇԴ/0938/02/10 քաղաքացիական գործով 24.05.2013 թվականի որոշումը (ըստ Շենգավիթ վարչական շրջանի խնամակալության և հոգաբարձության մարմնի դիմումի՝ Վլադիմիր Օհանովին անգործունակ ճանաչելու պահանջի մասին):

Հոգեկան հիվանդությամբ տառապողների պաշտպանության և հոգեբուժական օգնության բարելավման սկզբունքները (ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի 1991 թվականի դեկտեմբերի 17-ի 46/119 բանաձև) անթույլատրելի են համարում հոգեկան հիվանդությամբ տառապող անձանց նկատմամբ որևէ խտրական մոտեցում, և ճանաչում են անձի՝ իրեն անգործունակ ճանաչելու կապակցությամբ գործի վարույթին փաստաբանի միջոցով ներկայացված լինելու իրավունքը: Եվրոպայի խորհրդի Պառլամենտական վեհաժողովի 1977 թվականի հոկտեմբերի 8-ի 818(1977) «Հոգեկան հիվանդությամբ տառապողների վիճակի մասին» հանձնարարականում, Նախարարների կոմիտեի 1983 թվականի փետրվարի 22-ի R(83)2 «Հարկադիր կարգով հոսպիտալացված հոգեկան խանգարումներ ունեցող անձանց իրավական

պաշտպանության մասին» հանձնարարականում, 1999 թվականի փետրվարի 23-ի R(99)4 «Չափահաս անգործունակների իրավական պաշտպանության սկզբունքների մասին» հանձնարարականում, 2004 թվականի փետրվարի 24-ի Rec(2004)10 «Հոգեկան խանգարում ունեցող անձանց իրավունքների և արժանապատվության պաշտպանության մասին» հանձնարարականում ևս ընդգծվում է, որ հոգեկան խանգարումներ ունեցող անձինք պետք է ունենան բոլոր քաղաքացիական և քաղաքական իրավունքներն իրականացնելու հնարավորություն, իսկ դրանց սահմանափակումները թույլատրելի են «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի պահանջներին խիստ համապատասխան:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ ՄԻԵԴ) սույն գործին համանման փաստական հանգամանքներ ունեցող Շտուկատուրովն ընդդեմ Ռուսաստանի գործով վճռում նշել է. «Մի շարք նախկին գործերով (հարկադիր հոսպիտալացման առնչությամբ) Դատարանը հաստատել է, որ հոգեկան հիվանդությամբ տառապող անձը պետք է հնարավորություն ունենա լսվելու անձամբ, կամ անհրաժեշտության դեպքում, ներկայացուցչի միջոցով (տե՛ս, օրինակ, Վինթերվերպի գործը, կետ 79): Վինթերվերպի գործի առանցքում դիմողի ազատությունն էր: Այնուամենայնիվ, սույն գործում դատավարության ելքն առնվազն հավասար կարևորություն ունի դիմողի համար, քանի որ հարվածի տակ է (վտանգված է) կյանքի բոլոր ոլորտներում նրա անձնական ինքնավարությունը, ներառյալ՝ ազատության սահմանափակումը: Ավելին, Դատարանը նկատում է, որ դիմողը դատավարությունում երկակի դեր է խաղացել՝ նա շահագրգիռ կողմ էր, և միաժամանակ՝ դատական քննության հիմնական օբյեկտը: Ուստի, նրա մասնակցությունն անհրաժեշտ էր ոչ միայն նրան իր գործը ներկայացնելու հնարավորություն տալու համար, այլ նաև դատավորին՝ նրա մտավոր կարողության մասին կարծիք ձևավորելու հնարավորություն տալու համար» (տե՛ս Շտուկատուրովն ընդդեմ Ռուսաստանի թիվ 44009/05 գանգատով ՄԻԵԴ 2008թ. մարտի 27-ի վճիռը, 71-72-րդ կետեր):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 40-րդ հոդվածի համաձայն՝ Դատարանում ներկայացուցիչ կարող է լինել **դատարանում գործը վարելու պատշաճ ձևակերպված լիազորություն ունեցող ցանկացած գործունակ քաղաքացի,** բացառությամբ «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված դեպքերի:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ նույն հոդվածով նախատեսված դատական ներկայացուցչությունը կամ դրա կազմակերպումը որպես պարբերաբար կամ վճարովի հիմունքներով մատուցվող ծառայություն կարող է իրականացնել միայն փաստաբանը, բացառությամբ՝ մերձավոր ազգականի, այդ թվում՝ ծնողի, զավակի, որդեգրողի, որդեգրվածի, հարազատ կամ ոչ հարազատ (համահայր կամ համամայր) եղբոր կամ քրոջ, պապի, տատի, թոռան, ինչպես նաև ամուսնու կամ ամուսնու ծնողի, փեսայի կամ հարսի համար անվճար ներկայացուցչություն իրականացնելու դեպքերի:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացու տված լիազորագիրը վավերացնում է նոտարը կամ օրենքով նման իրավասություն ունեցող պաշտոնատար անձը: Փաստաբանին լիազորագիրը տրվում է հասարակ գրավոր ձևով և վավերացման ենթակա չէ:

Նույն օրենսգրքի 43-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անչափահասների, անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչված քաղաքացիների իրավունքները և օրինական շահերը դատարանում պաշտպանում են նրանց ծնողները (որդեգրողները), խնամակալները կամ հոգաբարձուները, որոնք դատարան են ներկայացնում իրենց կարգավիճակը հավաստող փաստաթղթեր:

Վերոգրյալ իրավանորմերից հետևում է, որ ցանկացած դեպքում անկախ ներկայացուցչի փաստաբան կամ մերձավոր ազգական լինելուց դատական ներկայացուցչություն թույլատրվում է իրականացնել միայն դատարանում գործը վարելու պատշաճ ձևակերպված լիազորություն ունեցող անձի կողմից: Ընդ որում օրենսդիրը որպես պարտադիր պահանջ նախատեսել է, որ նշված լիազորությունները պետք է ներառվեն լիազորագրում, որը քաղաքացիներին տրված լինելու դեպքում պետք է վավերացվի նոտարական կարգով:

Տվյալ դեպքում Դատարանում Ժուլետա Ամարիկյանի անունից հանդես է եկել նրա եղբայրը, սակայն գործում բացակայում է վերջինիս՝ դատարանում գործը վարելու պատշաճ ձևակերպված և նոտարական կարգով հաստատված լիազորագիրը: Միաժամանակ Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ Դատարանն ըստ էության Ժուլետա Ամարիկյանի եղբորը՝ Մուրազ Ամարիկյանին որպես ներկայացուցիչ ներգրավելու հիմքում ըստ էության դրել է այն հանգամանքը, որ Ժուլետա Ամարիկյանը չի կարող հանդես գալ ինքնուրույն, մինչդեռ հարկ է նշել, որ նույնիսկ այս դեպքում Ժուլետա Ամարիկյանի եղբայր՝ Մուրազ Ամարիկյանի կողմից իր կարգավիճակը հավաստող փաստաթղթեր չեն ներկայացվել Դատարանին, որպիսի պայմաններում Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ Դատարանի կողմից խախտվել են Ժուլետա Ամարիկյանի՝ ներկայացուցչի միջոցով իր իրավունքների և օրինական շահերի պաշտպանությամբ հանդես գալու իրավունքը:

Այսպիսով, Վերաքննիչ դատարանը բողոքի սույն հիմքի վերաբերյալ արտահայտած իրավական դիրքորոշման հիման վրա, գտնում է որ այն հիմնավոր է և բավարար Դատարանի վճիռը բեկանելու համար, միաժամանակ արձանագրում է, որ նման պայմաններում վերաքննիչ բողոքների մյուս հիմքերին չի անդրադառնում, քանի որ սույն գործով անհրաժեշտ է իրականացնել ամբողջ ծավալով գործի նոր քննություն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ, 220-րդ և 221-րդ հոդվածներով՝ Վերաքննիչ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վերաքննիչ բողոքները բավարարել մասնակի: Բեկանել Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 04.06.2013 թվականի վճիռը և գործն ուղղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության արդյունքում կայացվելիք վերջնական դատական ակտով:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո և նույն ժամկետում կարող է բողոքարկվել ՀՀ Վճռաբեկ դատարան:

ՆԱԽԱԳԱՀՈՂ ԴԱՏԱՎՈՐ՝	ԴԱՏԱՎՈՐ՝	ԴԱՏԱՎՈՐ՝
Դ. ԽԱՉԱՏՐՅԱՆ	Ն. ՏԱՎԱԲԱՑՅԱՆ	Ս.ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

Որոշումը մտել է օրինական ուժի մեջ :

Նախագահող դատավոր՝ Դ. Խաչատրյան